«Թրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության
«Կոռուպցիայի ընկալման 2010թ. ինդեքս»

«Թրանսփարենսի ինտերնեյշնլ» (Transparency International) կազմակերպությունը 2010թ. հոկտեմբերի 26-ին հրապարակել է «Կոռուպցիայի ընկալման 2010թ. ինդեքս» ամենամյա հետազոտությունը, որում ներկայացվել է աշխարհի 178 երկրների, այդ թվում՝ Հայաստանի պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալման մակարդակը:

Նկատենք, որ «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» բաղադրյալ ինդեքս է՝ «0»-ից մինչև «10» միջակայքում, ընդ որում՝ «10»-ը համապատասխանում է կոռուպցիայից լիովին ձերբազատված երկրներին, իսկ «0»-ն՝ լիովին կոռումպացված երկրներին: Ինդեքսի կառուցման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» օգտագործում է անկախ կազմակերպությունների կողմից տարբեր երկրներում գործարարների և վերլուծաբանների շրջանում իրականացված հարցումների և հետազոտությունների արդյունքները:

Հայաստանի 2010թ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի գնահատման համար «Թրանսփերենսի ինտերնեյշնլը» որպես աղբյուր է օգտագործել 6 միջազգային կազմակերպությունների կատարած 7 հետազոտությունների՝ կոռուպցիային վերաբերող գնահատականները: Մասնավորապես, վերցվել են Համաշխարհային տնտեսական համաժողովի «Համաշխարհային մրցունակության» 2009/2010թթ. և 2010/2011թթ. ինդեքսները, Համաշխարհային բանկի «Երկրի քաղաքականությունների և կառույցների գնահատման» 2009թ. ինդեքսը, Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման» 2009թ. ինդեքսը, «Բերտելսման» հիմնադրամի «Վերափոխման» 2010թ. ինդեքսը, «Ֆրիդոմհաուզի» «Դեմոկրատիայի առաջընթացի» 2010թ. ինդեքսը և «Գլոբալ Ինսայթի» 2010թ. «Երկրի ռիսկերի վարկանիշերը»: Նշված ինդեքսների հիմքում ընկած են Հայաստանի 2008 – 2010 թթ. տվյալները:

<u>Հայաստանի գնահատականները.</u> Հայաստանի պետական հատվածում կոռուպցիայի ընկալման ինդեքսը 2010թ. համար գնահատվել է «2.6»: Համեմատելով նախորդ տարվա «2.7» միավորի հետ՝ կարող ենք արձանագրել, որ, ըստ «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» փորձագետների, 2010 թ. կոռուպցիայի մակարդակը Հայաստանում վատացել է (տե՛ս աղյուսակ 1), որը պայմանավորված է դրա հիմքում ընկած գնահատականներից մեկի՝ Ասիական զարգացման բանկի «Երկրի կատարողականի գնահատման» 2009թ. ինդեքսում ներառված «Պետական հատվածի թափանցիկություն, պատասխանատու գործելակերպ և կոռուպցիա» ցուցանիշի գնահատականի 0.5 միավորով վատացմամբ: Նկատենք, որ Ասիական զարգացման բանկը անդամ-երկրներում իրականացվող քաղաքականություններին և կառույցներին յուրաքանչյուր տարի վարկանիշ տալու նպատակով օգտագործում է Համաշխարհային բանկի «Երկրի քաղաքականությունների և ինստիտուցիոնալ կարողությունների գնահատման» (CPIA) հարցաթերթիկը, այսինքն՝ Ասիական զարգացման բանկի «Պետական հատվածի թափանցիկություն, պատասխանատու գործելակերպ և կոռուպցիա» ցուցանիշի գնահատականը հարցում-ուսումնասիրության արդյունք է:

Այսպիսով, «Թրանսփերենսի ինտերնեյշնլի» գնահատմամբ Հայաստանը «Կոռուպցիայի ընկալման 2010թ. ինդեքսով» աշխարհի 178 երկրների թվում կիսում է 123-ից 126-րդ տեղերը՝ էրիթրեայի, Մադագասկարի և Նիգերի հետ: Նկատենք, որ նախորդ տարի Հայաստանը կիսում էր 120-ից 125-րդ տեղերը՝ Բոլիվիայի, Եթովպիայի, Ղազախստանի, Մոնղոլիայի և Վիետնամի հետ:

Հայաստանը տարածաշրջանային համապատկերում. 2010թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» ցուցանիշով Հայաստանը զգալիորեն հետ է մնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բոլոր երկրներից: Նախկին ԽՍՀՄ երկրներից Հայաստանը կոռուպցիայի գնահատականով զիջում է Մերձբալթյան երկրներին, Վրաստանին, Ղազախստանին և Մոլդովային (տե՛ս աղյուսակ 2): Հայաստանի հարևան երկրների պետական հատվածում կոռուպցիայի մակարդակը հետևյալն է. աշխարհի 178 երկրների թվում Վրաստանը գրավում է 68-րդ տեղը (3.8 միավոր), իսկ Ադրբեջանը՝ 134-րդ տեղը (2.4 միավոր): Նախկին ԽՍՀՄ երկրների շարքում առավել քիչ կոռումպացվածը էստոնիան է. զբաղեցնում է 26-րդ տեղը (6.5 միավոր):

Համաձայն «Թրանսփարենսի ինտերնեյշնլ» կազմակերպության հետազոտության, 2010թ.-ին աշխարհի 178 երկրների թվում առավել քիչ կոռումպացված երկրների առաջին տասնյակում են Դանիան, Նոր Զելանդիան, Սինգապուրը, Ֆինլանդիան, Շվեդիան, Կանադան, Հոլանդիան, Ավստրալիան, Շվեյցարիան և Նորվեգիան, իսկ առավել կոռումպացված տասնյակում՝ էկվատորիալ Գվինեան, Բուրունդին, Չադը, Սուդանը, Թուրքմենստանը, Ուզբեկստանը, Իրաքը, Աֆղանստանը, Մյանմարը և Սոմալին:

Աղյուսակ 1-ում ներկայացված է հարավկովկասյան երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» դինամիկան, իսկ աղյուսակ 2-ում՝ նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում 2010 թ. «Կոռուպցիայի ընկալման ինդեքսների» համեմատական նկարագիրը:

Հարավկովկասյան երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» շարժը ըստ «Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության գնահատականների

Աղյուսակ 1

Տարեթիվ	2010	2009	2008	2007	2006	2005	2004	2003	2002	2001	2000	1999
Գնահատված երկրների ընդհանուր թիվը	178	180	180	180	163	159	145	133	102	91	90	99
Հայաստան												
Տեղը	*123*	*120*	*109*	*99*	*93*	*88*	*82*	*78*	*-*	*-*	*76*	*80*
«Կոռուպցիայի ընկալման ինդեքս»	2.6	2.7	2.9	3.0	2.9	2.9	3.1	3.0	-	-	2.5	2.5
Օգտագործված հետազոտությունների քանակը	7	7	7	7	6	4	5	5	-	-	3	4
Վրաստան												
Տեղը	*68*	*66*	*67*	*79*	*99*	*130*	*133*	*124*	*85*	*-*	*-*	*84*
«Կոռուպցիայի ընկալման ինդեքս»	3.8	4.1	3.9	3.4	2.8	2.3	2.0	1.8	2.4	-	-	2.3
Օգտագործված հետազոտությունների քանակը	7	7	7	6	6	6	7	6	3	-	-	4
Ադրբեջան												
Տեղը	*134*	*143*	*158*	*150*	*130*	*137*	*140*	*124*	*95*	*84*	*87*	*96*
«Կոռուպցիայի ընկալման ինդեքս»	2.4	2.3	1.9	2.1	2.4	2.2	1.9	1.8	2.0	2.0	1.5	1.7
Օգտագործված հետազոտությունների քանակը	7	7	8	8	7	6	7	7	4	5	4	5

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում «Կոռուպցիայի ընկալման ինդեքսը» ըստ «Թրանսփերենսի ինտերնեյշնլ» կազմակերպության գնահատականների (2010 թ.)[1]

Աղյուսակ 2

Երկիր	Դիրքը աշխարհի 178 երկրների շարքում	«Կոռուպցիայի ընկալման ինդեքս»	Վստահելիության միջակայք	Օգտագործված հետազոտությունների քանակ
Էստոնիա	26	6.5	6.1-6.8	8
Սլովենիա	27	6.4	5.9-6.8	8
Լեհաստան	41	5.3	5.0-5.5	8
Լիտվա	46	5.0	4.4-5.5	8
Հունգարիա	50	4.7	3.9-5.5	8
Չեխիա	53	4.6	4.1-5.1	8
Լատվիա	59	4.3	3.7-4.8	6
Սլովակիա	59	4.3	3.8-4.9	8
Խորվաթիա	62	4.1	3.7-4.5	8
Մակեդոնիա	62	4.1	3.7-4.5	5
Վրաստան	68	3.8	3.0-4.7	7
Մոնտենեգրո	69	3.7	3.1-4.3	5
Ռումինիա	69	3.7	3.3-4.2	8
Բուլղարիա	73	3.6	3.2-4.0	8
Սերբիա	78	3.5	3.1-3.9	6
Ալբանիա	87	3.3	3.0-3.6	6
Բոսնիա և Հերցեգովինա	91	3.2	2.8-3.5	7
Ղազախստան	105	2.9	2.2-3.7	8
Մոլդովա	105	2.9	2.7-3.2	6
Կոսովո	110	2.8	2.7-3.1	3
Հայաստան	123	2.6	2.5-2.8	7
Բելառուս	127	2.5	2.1-3.1	3
Ադրբեջան	134	2.4	2.1-2.7	7
Ուկրաինա	134	2.4	2.1-2.6	8
Ռուսաստան	154	2.1	1.9-2.3	8
Տաջիկստան	154	2.1	1.7-2.5	7
Ղրղզստան	164	2.0	1.8-2.3	7
Թուրքմենստան	172	1.6	1.4-1.8	3
Ուզբեկստան	172	1.6	1.5-1.7	6

[1] *Աղբյուրը՝ http://www.transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2010/in_detail, http://transparency.org/policy_research/surveys_indices/cpi/2010/cpi_2010_table:*